ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 259-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 17.06.2021թ. N 197-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 03082021-06-0048 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Գագիկ Բաբկենի Սիմոնյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/4-24/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 17.06.2021թ. N 197-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 40.0 քմ արտաքին մակերեսով (37.6 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 41120 (քառասունմեկ հազար հարյուր քսան) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.003998 հա մակերեսով հողամասը՝ 31664 (երեսունմեկ հազար վեց հարյուր վաթսունչորս) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Գագիկ Բաբկենի Սիմոնյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. օգոստոսի 04
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 260-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 35-րդ կետերով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված առևտրի սրահը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՉՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 27.07.2021թ. տրված թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի N 3 շենքի հարավ-արևելյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 19.53 քմ արտաքին մակերեսով (14.3 քմ ներքին մակերեսով) առևտրի սրահի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի N 3 շենքի հարավ-արևելյան մասում գտնվող, 1993թ. ինքնակամ կառուցված, 19.53 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.001 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի N 3 շենքի հարավ-արևելյան մասում գտնվող, բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության առևտրի սրահին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, N 4/47 փոստային հասցե:
4. Բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության առևտրի սրահի զբաղեցրած 0.001 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված առևտրի սրահի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Կոնստանտին Սարգսի Մամաջանյանին օրինականացված առևտրի սրահը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. օգոստոսի 04
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 թվականի N 261-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԱՀԻՆ ՍԱՐԱՀԱՐԹ ԹԱՂԱՄԱՍ, 1/4 ՇԵՆՔ, N 33 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 06.04.2007թ. Հ 23-Ա որոշումը, Ալավերդու քաղսովետի կոմունալ սպասարկման բարեկարգման գրասենյակի 21.12.1966թ. տրված N 497 օրդերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության տնօրենի կողմից 16.07.2021թ. տրված N 0/40 տեղեկանքը, Արմենուհի Հայկազի Փիրուզյանի դիմումը, բնակ. հանձնաժողովի 05.08.2021թ. N 4 արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող՝ ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 1/4 շենք, N 33 բնակարանը (49.3 քմ ընդհանուր մակերեսով) 24650 դրամով, ուղղակի վաճառքով, օտարել բնակարանի վարձակալ Արմենուհի Հայկազի Փիրուզյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բնակարանի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. օգոստոսի 06
ք. Ալավերդի